Սեւծովյան համագործակցության նախագիծը՝ ՀՀ գիտական համագործակցության ընդլայնման եւ նոր տեխնոլոգիաների ձեռքբերման հիմք

2009 թվականի մարտի 17-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի ունեցավ Սեւծովյան համագործակցության նախագծի (Black Sea Interconnection, BSI) ենթակառուցվածքի բացումը, որին մասնակցելու համար Հայաստանից մեկնել էր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ներկայացուցիչները:

Նախագիծը Հայաստանում ներդնելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանն ասել է. «Մեր հետազոտողներն ու ուսանողները եզրակացրել էին, որ իրենց համագործակցության ջանքերը տարածաշրջանում եւ, ամենակարեւորը, Եվրոպայի հետ խափանված է արագագործ կապուղիների բացակայության պատճառով: Տեղեկատվական տեխնոլոգիայի զարգացումը ամենակարեւոր խնդիրն է Հայաստանի կառավարության առաջնային նպատակն իրականացնելու համար, այն է՝ ստեղծել գիտության եւ ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ազգային տնտեսություն: Սեւծովյան համագործակցության նախագիծը կապահովի մեզ՝ անհրաժեշտ ինֆրակառուցվածքով մեր գործընկերների հետ գիտելիքներ փոխանակելու, որն էլ կընդլայնի գիտահետազոտական համագործակցությունը եւ Հայաստան կբերի նոր գիտելիքներ եւ տեխնոլոգիաներ»:

Թբիլիսիում Սեւծովյան համագործակցության նախագծի ենթակառուցվածքի պաշտոնական բացման առթիվ իր ելույթում Գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը նշեց. «2000 թվականին ՀՀ կառավարությունը հայտարարեց տեղեկատվական եւ հեռահաղորդակցության ոլորտը Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից, իսկ 2008 թվականին ընդունվեց ոլորտի զարգացման նոր 10-ամյա ռազմավարություն՝ ուղղված ենթակառուցվածքի զարգացմանը՝ նպատակ ունենալով ձեւավորել կայացած տեղեկատվական հասարակություն, հաղորդակից դարձնել Հայաստանը գիտելիքի գոյացման համաշխարհային գործընթացին: Նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի կապերը տարածաշրջանային, եվրոպական եւ ողջ աշխարհի գիտական հասարակության հետ, ՀՀ կառավարությունը կարեւորում է մասնակցությունը BSI նախագծում եւ արդեն իսկ կատարել է համաֆինանսավորում՝ նպատակային ծրագրով ֆինանսավորելով GRID ծրագիրը, ինչը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության եւ տարածաշրջանի մոտ 240 գիտահետազոտական ինստիտուտների կապ հաստատել միմյանց հետ:»:

Իր ելույթում պարոն Հարությունյանը նշեց, որ ՀՀ կառավարությունը խրախուսում է այս նախաձեռնությանը եւ հույս հայտնեց, որ նախագիծը մեծապես կնպաստի «գրիդային միջավայրների» ստեղծման եւ զարգացման ուղղությամբ տարածաշրջանում տարվող աշխատանքներին, ինչպես նաեւ կապահովի Հայաստանի գիտական, կրթական հասարակության մուտքը դեպի եվրոպական եւ գլոբալ ցանցեր՝ հնարավորություն տալով ավելի սերտ կապեր հաստատել գիտական համայնքների միջեւ:

Թբիլիսի կատարած իր այցելության ընթացքում Գիտության պետական կոմիտեի նախագահը հանդիպել է նաեւ Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլիի գիտության գծով խորհրդական Ալեքսանդր Գոնգաձեի հետ, ով համագործակցության մեծ ցանկություն է հայտնել՝ Հայաստանի գիտության ոլորտում իրականացվող փորձն ուսումնասիրելու, ինչպես նաեւ Վրաստանում ներդնելու նպատակով: